


ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ:
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Ֆրիդրիխ կայսրի մահը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսի պարտքը. Սա-
րաւորի ոճիւրը. Արտաքին լուրեր.—ՀՅՈՒՍԻՍԻ-
ՆԵՐ.—ԲՕՐՄԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ՖԵԼԻՍ-
ՏՕՆ.

ՖՐԻԴՐԻԽԻ ԿԱՅՐԻ ՄԱՀԸ

Ընթերցողները յիշում են, անշուշտ, որ-
քան հրճուանքով ընդունեցին ձմարիտ
ազատասէր մարդիկ ոչ թէ միայն Գերմա-
նիայում, այլ և ամբողջ քաղաքակիրթ
աշխարհում կայսր Ֆրիդրիխ III-ի Գերմա-
նիայի գահի վրա բազմելու լուրը: Բայց
այդ ուրախութեանը վիճակված չէր երկար
տևել. այն կայսրին, որը իր թագաւորու-
թեան նոյն իսկ առաջին օրէն յայտնեց ի-
րան անկեղծ պաշտպան ազատութեան,
սահմանադրութեան, ժողովրդական բարօ-
րութեան, ձմարիտ լուսաւորութեան և
խաղաղութեան,—վիճակված էր միայն ե-
րեք ամիս թագաւորել:

Ֆրիդրիխ կայսրի մահը ոչ թէ միայն
Գերմանիայի համար կորուստ է, բայց կո-
րուստ է և ամբողջ քաղաքակիրթ աշխար-
հի համար:
Գերմանիան այդ երեք ամսկայ ընթաց-
քում նոր էր սկսել ձմարիտ ազատ քա-
ղաքական կեանքով ապրել, նոր էր մտել
իր ներքին ազատ զարգացման ասպարիզի
վրա,—և չէր կայ այլ ևս այն մարդը, որը
այդ բարեբար գործի տուեց երկրին:

Խիստ և ճշնոյթ միջոտարկման յետոյ,
Գերմանիան, նոր կայսրի ղեկավարութեան
շնորհով, նոր էր սկսել շունչ առնել, նոր
էր սկսել մտածել ուրիշ, աւելի բարձր ի-
դէականի մասին, քան թէ արիւնհեղ պա-
տերազմների իդէալը:

Ֆրիդրիխի մահէն մի քանի օր առաջ
ներքին գործերի մինիստր Պուտկամերի
փոխվելով վճռողական հարուած տրվեցաւ

և Բիսմարկի կառավարչութեան յետադէմ
սխառեմային Առաջադէմ կուսակցութիւնը
տօնում էր. իր յաղթանակը: Այժմ ամեն
բան կանգ առաւ:

Ինչպէս հեռագիրը մեզ հաղորդեց, Ֆր-
իդրիխ կայսրը թողեց մի քաղաքական
կտակ, որը պէտք է բացվի արդարադա-
տութեան մինիստրի ներկայութեամբ: Ար-
դեօք այդ կտակի մէջ հանգուցեալ կայսրը
յայտնել է իր քաղաքական գաղափարները
և կտակել է իր յաջորդին իր քաղաքական
պրօգրամային հետեւելու,—այդ դեռ յայտ-
նի չէ:

Յայտնի չէ նմանապէս, ի՞նչ է սպասում
Գերմանիայի մօտիկ ապագայում: Հան-
գուցեալ կայսրի որդին, Վիլհելմ, երկրորդ
անունով, նստել է այժմ իր պապերի գահի
վրա. ի՞նչ ուղղութեան կը հետեւէ երի-
տասարդ կայսրը, արդեօք նրա օրով նորից
կը սկսի տիրապետել Գերմանիայում միջ-
տարիզմը և նորից յաղթող կը հանդիսա-
նայ բիսմարկեան յետադէմ կուսակցութիւ-
նը,—այդ դժուար է հաստատապէս ասել,
այդ մեզ ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Գերմանիայի համար ծանր տարի է եղել
ներկայ տարին. այս մի տարվայ ընթաց-
քում ազգը մին միւսի ետեւից թաղեց իր
երկու կայսրերին: Միայն անհրեքելի է,
որ Ֆրիդրիխի երեք ամսկայ կարճատև
թագաւորութեան ժամանակ գերմանացիք
նոր և իրանց համար անտուր քաղաքա-
կան իդէալների ճաշակն առան: Այդ կար-
ճատն թագաւորութիւնը անմոռանալի կը
մնայ գերմանացիների համար, որովհետեւ
գահի բարձրութիւնից յայտնած համակրե-
լի և ազատամիտ գաղափարները մի ամ-
բողջ յեղափոխութիւն առաջ բերին իւրա-
քանչիւր քաղաքացու սրտում և մտածելու
եղանակի մէջ, ծնեցնելով համայն ազգի
մէջ նոր և երբեք չեղած յոյսը՝ հայրենիքի
ազատ քաղաքական կեանքի իդէալը իրա-
գործված տեսնելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 31 մայիսի

Երևանի հայոց թեմ. հոգ. դպրանոցի հոգաբար-
ձութիւնը ինսպրնացար խնդրում է ձեռ հրատա-
րակել «Մշակի» էջերում այս քանի մի տողերը:

Հոգաբարձութիւնը անօրինել էր այս տարվայ
յո՞ւնիսի հարցաքննութիւններից յետոյ առաջին
անգամ դպրանոցական վեցերորդ դասարանից ա-
ւարտած աշակերտների արձակման հետ ի դէպ
կատարել և դպրանոցի յիսնամեայ յօդեւանի հան-
դէսը: Այս մասին դեռ ևս հոգաբարձութեան կող-
մից պաշտօնապէս հրատարակութիւն չեղած, ինչ-
պէս յայտնի է, մասնաւոր յերևանում, տարածվե-
ցաւ յիշատակեալ հանդիսի կատարման լուրը:
Հատկէր կարելի է կը սպասեն յունիսին այդ հան-
դիսին ներկայ գտնվելու, բայց հոգաբարձութիւնը
պարտք համարեց իրան այս քանի մի տողով հը-
րատարակել հետաքրքիր հասարակութեանը, որ
դպրանոցի յիսնամեայ պատրաստի պատմութեան
տպագրութիւնը անհաւրին լինելով մինչև յունիս
հասցնելը, այդ պատճառով հանդիսի կատարումը
յետաձգվեց առաջիկայ սեպտեմբերին, այնպէս որ
1888/9 ուսման տարեշրջանի բացման օրը յերե-
անի դպրանոցն օրհնելով նոյն տարեշրջանի բացու-
մը, կը տօնէ իր յիսնամեակը, կարճակէ ՎՄ
դասարանն աւարտողներին պատշաճաւոր վկայա-
կաններով և այդ օրը կը ներկայացնէ հասարա-
կութեանը դպրանոցի ներկայ գրութիւնը:

Անդամ հոգաբարձութեան Կ. Գառամանյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակին» կարելի է գրվել եօթ ամսով. վճա-
րելով 7 ռուբլի, վեց ամսով՝ 6 ռուբլի, հինգ ամ-
սով՝ 5 ռուբլի, չորս ամսով՝ 4 ռուբլի, երեք ամ-
սով՝ 3 ռուբլի, երկու ամսով՝ 2 ռուբլի, և մի ամ-
սով՝ 1 ռուբլի:

է եղել, ուստի ներեցէ եթէ ես էլ ձեր լօգիկան
կանուանեմ Քաւրա մի լօգիկան...

Յօդուածագիրը կարծում է, որ եթէ գերմանա-
կան հեղինակների անուններ կը բերի, յօդուածի
վրին էլ կը դիմ Գրիգորացիք մի ոտանաւոր, մինչ
բարբար կը շուարվեց, ու անպատճառ. կընդու-
նենք նրա ամեն մի խօսքը աւետարանի տեղ...
Կարծես թէ մենք ինքներս մեր սեփական դատո-
րութիւն չենք կարող ունենալ և ամեն բան, ինչ
որ Գերմանիայումն է ասվում և կատարվում, ա-
ռանց դատողութեան պէտք է ընդունենք: Կար-
ծես թէ Գերմանիայումն էլ շատ բան չէ կա-
տարվում, որ վատ է, անհամակրելի և դատա-
պարտելի է: Ուշում էք ձեռ հարկւր օրինակ բե-
րեմ գերմանական ամենաբարեւելի մանկավարժա-
կան հեղինակութիւններից, որոնք քարոզում են
դպրոցում մանուկներին ծեծելու անհրաժեշ-
տութիւնը,—ուրեմն մենք էլ այդ մանկավարժա-
կան ղաւհաւը և իր, քաւրա մի լօգիկային
անպայման, կուրօքեն հետեւելով, պէտք է սկսենք
ծեծել մեր մանուկներին... և դեռ այդ քարաւ-
ների պէս մարդկանց ուսուցիչ և տեսուչ նշանա-
կենք մեր դպրոցներում:

Յօդուածագիրը, ինչպէս երևում է, միայն գեր-
մանական փրագմաներ է սովորել, սովորել է թու-
թալի պէս ուրիշների մտքերը կընկնել, բայց չէ
սովորել իր սեփական խելքով դատել, իր ինք-
նուրոյն համոզմունքներ ունենալ, ջոկել Գերմա-
նիայում եղած բաներում լաւը վատից:

Եթէ ձեր դուրսը սեփական դատողութիւն ա-
նելու սովոր լինել, դուք կը հասկանայիք, որ ա-
մեն հասարակութեան համար, որին թանգ է իր
բարոյական ապագան,—աւելի նշանակութիւն

Ստացանք Արդուինից, բժիշկ Ա. Միրմանեա-
նից, 5 ռուբլի Բաֆֆիի գերեզմանի վրա արձան
կանգնեցնելու օգտին: Յարգելի բժիշկը աւելաց-
նում է իր նամակի վերջում հետեւեալը: «Յոյս ու-
նեմ որ մեր հայ բժիշկներից շատերը կը մաս-
նակցեն մեր հեղինակի յիշատակին արձանի հա-
մար հանգանակութեան գործում»:

Յունիսի 2-ին, Համբարձման օրը, անաղին
բազմութիւն հաւաքվեց Թիֆլիսի Խօջի-Վանքի
գերեզմանոցում: Այդտեղ կատարվում էր Բաֆֆիի
բառաւանդեալ հոգեհանգիստը: Հանգուցեալի գե-
րեզմանը զարդարված էր ծաղիկներով և ժապա-
ւէններով. կային երկու նոր պատկերներ՝ մին Ման-
չետրի, միւրը Գերբէնդի հայերից: Հոգեհան-
գիստից յետոյ տէր-Մուշեղ քահանայ Տէր-Վան-
դեան մի քարոզ ասեց, այնուհետեւ մի ե-
րիտասարդ գործակատար մի ոտանաւոր կար-
դաց, վերջապէս կարդացվեցաւ և մի վերին
աստիճանի համակրելի բանաստեղծութիւն ու-
սերէն լիզուով: Այդ բանաստեղծութեան հե-
ղինակը, ուսուց «ՀԱՅԱՅԵ» լրագրի նախկին
խմբագիր Ստայկասկին էր: Գերեզմանոցը մի ան-
սովոր տեսարան էր ներկայացնում. ամբողջ Թիֆ-
լիսը կարծես այդտեղ էր: Ինչ և իցէ այդ օրը
գերեզմանոցում անհամեմատ աւելի ժողովուրդ
կար, քան թէ հանգուցեալի թաղման օրը: Հոգե-
հանգստի ժամանակ «Աղբիւրի» խմբագրութիւ-
նը ձրիաբար տարածում էր հանդիսականների
մէջ Բաֆֆիի պատկերը:

ԿԱՐԱՆՑ մեղ գրում են: «Այստեղ գրեթէ ամեն
օր անձրև է գալիս, շատ անգամ կարկտախառն:
Մի քանի անգամ ջրերի բարձրանալուց փնակե-
ցան: Մի հին քարվանսարայ էլ քանդվել է: Քար-
վանսարայի տէրերը ուղեւաւով նորից կառուցա-
նել իրանց շինութիւնը, մայիսի 30-ին սկսեցին
նոր հիւր փորել և այդ ժամանակ գետնի մէջ
գտնվեցաւ ոսկով լի մի պոկիկ: Թէ ինչ դրամներ
են և ինչ ժամանակին են պատկանում, դեռ ևս
որոշված չէ»:

ունի ապագայ սերնդի մտաւոր և ֆիզիկական
առողջութիւնը, քան թէ համայն դպրոցների բո-
լոր ուսուցիչների և հոգաբարձուների գոյութիւնը
և նրանց շահերը:

Ինչ ուղեն ասեն մանկավարժները, նոյն իսկ
երեւելի Ստայի պէս,—բայց ոչ Եւլեյցարիայում, ոչ
Յրանախայում, ոչ Անդրիայում, ոչ Աւստրիայում,
ոչ էլ նոյն իսկ Գերմանիայում՝ մասուրը երբեք
չէ քաշվում ամենախիստ կերպով քննադատել
դպրոցի կարգը, դատաւորութիւնը, վարչութիւ-
նը, հարցաքննութիւնները, վարժապետների վար-
մունքը և այլն, որովհետեւ քաղաքակիրթ երկր-
ների հասարակաց կարծիքը և նրա օրգանները
երբեք չեն թոյլ տայ, որ դպրոցը անկօնաւոր
վարվի նոր սերնդի հետ, որը նոյն հասարա-
կութիւնների բարոյական գոյութեան միակ յոյս
և ապակէնն է... Եւրօպայի և Ամերիկայի հա-
սարակաց կարծիքը հենց որ նկատում է մի ան-
կանօնութիւն, մի անկարգութիւն դպրոցի մէջ,
հրապարակապէս մերկայցնում է այդ բոլորը, եր-
բեք չը թոյլ տալով որ նոր սերունդը ֆիզիկա-
պէս կամ բարոյապէս այլանդակիլ անշնորհ ման-
կավարժների ձեռքով: Իսկ դուք ուղում էք, որ
նկատելով որ և է պակասութիւն դպրոցում,
մենք լուհենք և զոհենք մեզ համար թանգահին
նոր սերունդը ուսուցիչների և հոգաբարձուների
շահերին, միմիայն աչքի առնել ունենալով այն,
որ կարգապահութիւնը, հնադարաւորութիւնը և
մանկավարժների հեղինակութիւնը չը խանգար-
վի:

Պ. յօդուածագիրն յայտնի կը լինի, որ քաղա-
քակիրթ ազգերը ամեն տեղ հիմնել են այժմ
«Կենդանիների հոլանսարութեան կամ պաշտ-

ՖԵԼԻՍՏՕՆ

Տապանիս համար առաջարկված նոր հիւրեր.—
Աւետարան աղանի.—Լօգիկա և Ներսիսեան
գլխոյն.—Վաչագ Գարամի լօգիկան.—Գարոցը և
հասարակաց կարծիքը.—«Կենդանիների հոլանսա-
ւորութեան ընկերութիւններ» և մարդկային նոր
սերունդը.—Նոր սերունդը և մանկավարժները.—
Գրական քարամութիւն և Գարբիէլ Տէր-Գարբիէ-
լեանի գիրքը.—Մի տխուր հանգէս.—«ՀՈԲՈՇԻ»
լրագրի յօդուածը.—Գիտնէր թաղել, բայց չը գի-
տնէր պահպանել.—«Արձագանք» վրիպակը և
Գէորգ Եւանդուեան.

Իմ վերջին ֆելիտօնից յետոյ, որը շատ են
հաւանել ամեն տեղ, մասնաւոր տապանի
միտքը, սկսել եմ ամեն տեղից՝ Երևանից, Արա-
քաւրից, Ախալցխայից և այլն, նամակներ ստա-
նալ, որոնց մէջ ինձ առաջարկում են իմ տապա-
նիս համար նոր նոր անձնաւորութիւններ այդ
գաւառական քաղաքներից:

«Ափսոս կը լինէր, գրում են ինձ այդ նամակ-
ներում, որ մեր թէ քաղաքային վարչութեան մէջ
մի քանի վարիչներ, թէ մեր ուսումնարանների
մի քանի երեւելի մանկավարժներ կորած լինէին
հայրութեան համար և այդ թանգահին անհատնե-
րը ոչնչացած լինէին ջրհեղեղից...»

Այո, դա սխալ էր իմ կողմից, որ ես գաւա-
ռացի գործիչների մասին չը մտածեցի...

Բայց հիմա ուշ է արդէն. հեղեղը վերջացաւ, և
աւետարան աղանիս եկաւ ու բերեց մեզ խա-
ղաղութիւն:

Այդ աւետարան աղանիս մի ինչ որ նոր ման-
կավարժ է, որը հանդէս դուրս եկաւ «Արձագանք»
շաբաթականի № 20-ի էջերում, իր երեւելի յօ-

ձայն մը չառնելով ու դուռը գոյ գտնելով ստիպ-
ւեր է պարտեղի կողմէն պատահաննէն վեր ելնել
և ստիպմամբ տեսնել է իւր մօր ու եղբոր արիւ-
նաթաթաւ դիմակները. այն պահուն ուստիկանու-
թեան իմաց տրուել է և այսպէս խնայուել է
ստիպելով ուժիւրը:

Ուստիկանութիւնը ձերբախտուած է այդին մէջ
գտնուող պատմացի թուրք պարտիզան մը, խո-
հարարը, առջի օրը նոյն այդին մէջ աշխատող
լազ գործաւոր մը և մէկ քանի ձկնորսներ որը
երեկ ձկնախաղաղութիւն կաշկանդեալ Պէշիկթաշ և
անտի ուստիկանաւորները զրկուեցան ընդ հակողու-
թեանմբ:

Ընդհանրապէս կը կարծուի թէ ոճրին շարժա-
ւիթը գործութիւնն եղած լինի, որովհետեւ Տիկին
Թաղուհի վրայ գտնուած ժամացույցն և մէկ քա-
նի հարկեր դրուէն, ինչպէս նաև սենեկին մէջ
գտնուած լէշլուշէր մը և դիտակ մը գործուած
են: Կրտսեր նաև թէ մէկ քանի օր առաջ Տիկին
Թաղուհի 120 ոսկւոյ վարձու տուած էր իւր ի
Պէշիկթաշէր ունեցած մէկ տունը, սակայն դրա-
մը տակաւին դանձած չէր:

Ինչպէս երեկ ծանուցելը, Բարձր Արքայա-
մարտիկը անմիջապէս իմաց տուած է ի կայս. պա-
լատ իւր հօրաքեռ և նորա որդւոյն վրա ի գործ
դրուած եղեւնագործութիւնը: Վեհ. Սուլթանը
խորապէս յուզուելով հրամայել է որ ստիկա-
նութիւնը զիչեր ցերեկ աշխատելով և ամէն
շաբթի ի գործ դնելով գտնէ ու ձերբակալէ չարա-
գործներն: Ուստիկանութեան քննիչ Պ. Պոնէն եր-
կու օրէ ի վեր Պէշիկթաշէր կերթեկեք. նոյնպէս
այս ղէպքին համար բազմաթիւ ուստիկան
ծպտեալ պաշտօնեայք յատկացուած են որը
խիստ խուզարկութիւններ կը կատարեն ամէն
կողմ:

(Արեւելք)

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԻՆ

—Անգլիական լրագրողներն հաղորդում են Ե-
գիպտոսից, որ եգիպտական մինիստրութեան նա-
խագահ, հայազգի Նուբար-փաշան, հրաժարական
է տալիս իր պաշտօնից: Հրաժարականի պատճա-
ռը դեռ ևս բացատրված չէ լրագրողներում:

—Վանից մեզ գրում են, որ մի քանի թիւք
զինուորներ այս օրերս մտել են հայ գիւղական
եկեղեցիները և սկսել են այդ եկեղեցիներից վաճ-
ղել աղօթիչներին, գոչելով՝ «կորէք այստեղից»,
մինք ձեր եկեղեցիներից պիտի մղկիթներ դարձ-
նանք»:

—Կ. Պոլսից մեզ լուր է հասել, որ իւր թէ
թիւքաց կառավարութիւնը որոշել է մասնաւոր
յանձնաժողով ուղարկել Մուշ, Վան, Կարին

և այլն, քննելու համար այդտեղի հայերի
զանգաւորները և եթէ այդ զանգաւորները որ
և է հիմք ունեն, գործ դնել հարկաւոր դարձնա-
նելու: Յայտնի է որ 1879 թ.ին երեք հատ այդ
տեսակ յանձնաժողովներ կազմվեցան և ուղարկ-
վեցան Հայաստան, բայց որ և է արդիւնք չունե-
ցան:

—Խառակական ազգային անիւ առիթով խառա-
կան թագաւոր Ուսթման Բեյ քանի յանգաւորներ
ընդ ներումն չնորհեց և Ալբերկայի մէջ նշանաւոր
ժողովութիւններ մատուցած զինուորներին, ո-
րոնց թուով և զօրավար Սան-Մարցանօին, պա-
տուանշաններ տուեց:

—Լրագրողները հաղորդում են, որ խառակական
կառավարութիւնը պատրաստել է մի նոր ծրա-
դիր պատժական օրէնքներ: Այդ օրէնագիծով շու-
տով պիտի զբաղվի ազգային ժողովը: Պատը, հը-
ռօմէական կղերի դուխն անցած, բողոքել է ար-
դէն այդ օրէնագիծի դէմ, քանի որ նոր օրէնքը
ենթադրում է խիստ պատիժներ առաջարկել և
յանցաւոր եղած եկեղեցականներին վերաբերմամբ
ու առհասարակ ընդարձակ իշխանութիւն է տա-
լիս քաղաքացիական իշխանութեան ձեռքը ընդ-
դէմ յանցաւոր հողատիրականներին:

—Գերմանական ներքին գործերի մինիստր
Պոտկամպերի հրաժարականը, առհասարակ լաւ
տպաւորութիւն է գործել Գերմանիայում, որով
հետեւ Պոտկամպեր սատիկ անժողովրդական էր
ամբողջ երկրում:

—Հեռագիրը Վիեննայից հաղորդում է, որ
Ստամբուլում և Մոսկովայում բողոքական մինիստր-
ները հրաժարական են տուել իրանց պաշտօնից:

—Լուսաւոր-փաշայի տեղ եգիպտական մինիստր-
նախագահ և ներքին գործերի մինիստր նշանա-
ված է Բիւր-փաշան: Կարծում են որ արտաքին
գործերի մինիստր կը նշանակվի Մուստաֆա-
Յալմա-փաշան: Մնացած մինիստրները չեն փոխ-
վում:

—Փարիզի գերմանական դեսպան կոմս Միւնս-
տերի հրաժարական է տուել:

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովի
այն նիստը, որի մէջ առաջին անգամ դենքալ
Բուլանիէի ներկայացրեց իր դեկլարացիոն սահմա-
նադրութեան վերաբնութեան և պարլամենտի
արձակման մասին, սատիկ աղմուկ է եղել:
Կըքերը այն ատիւնն յուզված էին այդ նիստում,
որ ոչ մի կուսակցութիւն չէր թող տալիս հակա-
ռակ կուսակցութեան ներկայացուցիչներին խօ-
սել, բոլոր ճառերը ընդմիջվում էին ամենախիւ-
րական և նոյն իսկ սպառնալի բացականչու-
թիւններով: Ամենից արժանաւոր և կըքերից հե-
ռու. Ալէքսանտր ճառն էր:

Կարծում որ երեքը:

«Արձագանք» շաբաթաթերթը շատ անգամ
յանդգնում է ուրիշներին մեղադրել, որ նրանք
հայերէն չը գիտեն Բայց թէ «Արձագանքի» աշ-
խատակիցներից շատերը, ի միջի այլոց և մեր ե-
րեւելի իրաւաբան-մատենագիր Գեորգ Եւանգել-
եան, որքան գիտեն հայերէն.—այդ գաղաղելը
միաւտարաբար և անշնորհ կերպով մերկայանում է
ընթերցողների առջև նոյն ինքն «Արձագանք»
իւր 21-օրը համարում տպված «Ալբիսկի» վերնա-
գրով փոքրիկ նկատողութեան մէջ:

Յայտնվում է, որ պ. Գեորգ Եւանգելեան կա-
տարելապէս տգէտ է իր մայրենի լեզուի մէջ, չը
նայելով, որ թող և տալիս իրան յօդաւանդը դը-
րել, և երբ մի բան գրում է լրագրի համար՝ բա-
ւերի կէտից աւելին ուստեղէն է գործածում և
յետոյ խնդրում է խմբագրութեանը թարգմանել
հայերէն: Բայց հիմա մեր պարտքը լաւ բռնվեց:

«Արձագանքի» № 19-ի մէջ իր տպւած «Երկու
խօսք պ. Գրիգոր Արծրունի» վերնագրով պա-
տասխանը, Գեորգ Եւանգելեան մոտաւորապէս
այսպէս էր գրել:

«Այժմ աւելի ևս հեռու փախչելով օ՛՞՞ն ուս-
տացի հարցից, դուք ձեզ համար թուովեալ
համարեցիք պատշաճօրէն պատշաճօրէն օրգա-
նիզացիոն: Այս տողերի համար, որ դուք չը տեսն-
ված և չը լսված ժողովուրդ, և չա՛րձձձձձձձ
ինձ պրիւնցիպաւե, թող ուրիշները օկլեյմաթ
ձեր արարքը այն անունով, որին ձեզ պէս լրա-
գրագետը ԺՈՒՐՆԱԼ»:

Այդ տեսակ յօդուած գրելուց յետոյ, Եւանգել-
եան լուսանցքի վրա աւելացնում է ի գիտու-
թիւն «Արձագանքի» խմբագրութեան հետեւալը.

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՈՐԿՈՎ, 1 յունիսի: Այսօր պաշտօնապէս
լացված է Տրոյցիկայա բողոքական տօնախմբումը:

ՕՐԵՍՈՒ, 1 յունիսի: Լիւթենան գաւառի Չեր-
կոսեան վոյստի ստարչինա Սկուրդին թագա-
ւորական փողերի վառման, խաբէութեան, ինք-
նակամ կերպով ուրիշների սեփականութեան գը-
րաւման և վաշխաւորութեան համար դատաւարա-
ված է աքսորի Սիրիլի ոչ հեռու տեղերը, իսկ
երկու հարկահաններ դատաւարաւորված են կալա-
նաւորների բանտը նետելու:

ՎԻԷՆՆԱ, 1 յունիսի: Զինուորական վարչու-
թիւնը հրաժարվեց Գալլիցիայի սահմաններից
զուրա գտնվող զորքերի մասերը Գալլիցիա տեղա-
փոխելու մտքից: Այսօր, առաւօտեան 7 ժամին,
Սերանկօ հասաւ աւստրիական թագաւորաւոր
իւր ամուսնու հետ:

ԲԵՂԳՐԱԿ, 1 յունիսի: Վախճանվեցաւ Նիշի
91 ամեայ արքեպիսկոպոս Վիկտոր.—«Велико-
Серби» լրագրի խմբագիր Կոպեարսկի, մամուլին
վերաբերեալ օրէնքները խախտելու համար դա-
տաւարաւորված է միամեայ բանտարկութեան:

ՎԻԷՆՆԱ, 1 յունիսի: Այստեղի քաղաքական
չընդաներում խորին տպաւորութիւն է գործում
Բերլինում Երեւալեալ տիւրը դրութիւնը: Այն
հանգամանքը, որ դրութիւնը տիւր է, ցաւելով
խոստովանում են այստեղ Վիեննայում
հասկանում են, որ վատանում է կայսրի առող-
ջութիւնը. մինիստրական ծանր ճգնաժամ և իշ-
խան Բիւրաքիի ղեկավարութիւնը շարժելից Գերմա-
նիայի ազգային սիւսեմայի հիւնքերը: Այստեղի
դիվանագետների կարծիքով, եթէ Բերլինում փո-
փոխութիւններ կը շարունակվին, այն ժամա-
նակ եւրոպական գործերի դրութիւնը պէտք
է նոր ուղղութիւն ստանայ:

ՊՕՏՒԱՄ, 1 յունիսի: Որովհետեւ կայսրի այժ-
մեան դրութեան մէջ կերակուր հասցնող զօնդի
մտցնելը մի փոքր վտանգաւոր է համարվում,
այդ պատճառով բժիշկ Մէկէնզի միայն այն ժա-
մանակ տուեց իր համաձայնութիւնը վերադիւնալ
գործը գործ դնելու համար, երբ բոլոր բժիշկ-
ները կարծիք յայտնեցին, որ զօնդի ներմուծումը
անհրաժեշտ է, կայսրի կեանքը երկարացնելու
համար: Բժիշկ Մէկէնզի դեռ չաբալժ երկերդեան
կայսրի կողմը գործում մտցրեց խողովակ տաքա-
նով, որովհետեւ հիւանդի կողմը սկսում է միա-
նալ որկորի հետ: Կայսրին կերակուր են թանձ-
րացրած կաթով սերի հետ միասին, և այդ պատ-
ճառով բժիշկ Մէկէնզի օրը մի քանի անգամ
պատրաստում է այդ խառնուրդը:

Ինդրեմ այս տողերը հայերէն լեզուով թարգմա-
նեցէք, միայն ուստեղէն բառերը այլ ևս չը դը-
նեք:

«Արձագանքի» խմբագրութիւնը ճշմարիտ
թարգմանում է Եւանգելեանի յօդուածում եղած
անթիւ ուստեղէն բառերը, բայց միամտաբար,
կամ անհոգութիւնից նրա մասնաւոր նկատողու-
թիւնն էլ չէ քննում և աղպէս ուղարկում է
Մարտիրոսեանի տպարանը: Տպարանը բոլորը չա-
րում է, նոյնպէս և այն տողերը, որոնք ուղղված
էին յատկապէս խմբագրութեանը, սրբագրողն էլ
սկսում է սրբագրել և տեսնելով որ յիմար բան
է դուրս գալիս, խելք է բանեցնում: Նա ինքն ի-
րան աւտում է. «Երեւի այդ տողերը Գրիգոր Արծ-
րունի են վերաբերվում, քանի որ մենք բոլորս,
սկսած Պետրոս Սիւննեանից, թէև ինքնուրուշ շատ
վատ գիտենք հայերէն, բայց թուովակի պէս տա-
վորութիւն ենք առել միշտ կրկնել թէ Գրիգոր
Արծրունի հայերէն չը գիտէ... ուրեմն արի՛
«այս տողերը» բառերին աւելացնում «ձեր» բա-
ռը, որ դա վերաբերվի Գրիգոր Արծրունի: Եւ-
անա Եւանգելեանի յօդուածը աղպէս էլ արդ-
վում է, փակագծում գրված հետեւալ պարբերու-
թեանը. «Ինդրեմ այս ձեր տողերը հայերէն լեզ-
ուով թարգմանեք, միայն ուստեղէն բառերը այլ
ևս չը դնեք»:

Իսկ «Արձագանքը» ուղենալով յօնքը դրսուել,
աչքն էլ է համար: Իր վերջին, 21-օրը համարի
նկատողութեան մէջ խմբագրութիւնը հաւատաց-
նում է, որ այդ երկու տողերը պատահամբ ու-
րիշ յօդուածից են ընկել, չուղենալով խոստովան-
վել, որ իր աշխատակիցը հայերէն չը գիտէ, իր
գրութեան մէջ բառերի մեծ մասը առեւտրէն է
դնում, և ապա խնդրում է թարգմանել...
Իսկ Մարտիրոսեանի տպարանը խմբագրութեան

ՄՕՍԿՎԱ, 2 յունիսի: Կեղծ դրամ շինողների
գործի վերաբերմամբ դատաւարական քննու-
թիւնը վերջացաւ երեկ պետական բանկի հաղոր-
դագրութեան ընթերցմամբ, որից երևում է թէ
128 հազար ռուբլու կեղծ թղթադրամ է մտել
բանկը: Ապա սկսվեցան դատաւարական վիճա-
բանութիւնները: Երեկ կայացաւ արհեստագործնե-
րի աշխատանքի և արհեստանոցների կազմակեր-
պութեան փոխարարձ օգնութեան նորահաստատ
ընկերութեան անդամների առաջին ժողովը: Ըն-
կերութիւնը դիտաւորութիւն ունի արհեստագոր-
ծների ձեռագործների ծախելուն նպատակը՝ արտա-
սահմանում, իսկ Մոսկվայում ունենալ մի լի պա-
հետ ձեռագործների օրինակների, և աշխատել որ
մեր հիւպատոսները արտասահմանում ունենան
բաժանմունքներ ուստեղ արհեստագործների և
գործարանատէրերի ձեռագործների համար:

ՊՕՏՒԱՄ, 2 յունիսի: Կայսրի դրութիւնը ա-
ւելի վատ է: Այսօր առաւօտեան 4 ժամից
կայսրուհին չէ հեռանում կայսրի անկողնից.
կայսրական ընտանիքի բոլոր անդամները հա-
ւաքեցան Պոտսդամում:

ԲԵՂԻՆ, 2 յունիսի: «Norddeutsche Allg. Zei-
tung» աւտում է, որ կայսրի հիւանդութեան մէջ
չափաւորապէս սպառնալի յատկութիւններ ունեցող
երեւոյթներ են նկատվում: Հիւանդի շնչառութիւ-
նը դժուարացած է և բժիշկները ենթադրում
են, որ հիւանդու ճգնաժամը տարածվել է և թո-
քերի վրա:

ՓԱՐԻՉ, 2 յունիսի: Անդրաշի հրաժարվեց դէ-
լեգացիայի անդամ լինելու: Կոչումից, և այդ վար-
մունքը ընդհանուր զարմանք պատճառեց: Պատ-
ճառը անպայտ է:

ՄՕՍԿՎԱ, 3 յունիսի: Թղթադրամների կեղծող-
ների գործը վերջացաւ. մեղադրվածներից մէկը
դատաւարաւորված է 8 տարւոյ, մէկը—7, երկուսը
—6 և երեք 4 տարւոյ տաժանալի աշխատանք-
ների: Չորս հողի աքսորվում են Սիրիլի հեռաւոր
կողմերը և չորսը ոչ հեռաւոր կողմերը:

ՊՕՏՒԱՄ, 3 յունիսի: Ֆրիդրիխ կայսրը առա-
ւօտեան ժամը 11-ին վախճանվեցաւ: Ֆրիդրիխ-
կրոնի պալատում Մահման րօպէին ներկայ էր
հանգուցեալի ամբողջ ընտանիքը:

ԲԵՂԻՆ, 3 յունիսի: Ժամի երկուսին սկսվեց
զանգահարութիւնը և բարձրացրին սև դրօշակնե-
րը: Կայսրը մահից առաջ հաղորդութիւն էր ըն-
դունել պալատական քարտիչ Պիլգրիմսի ձեռքից:
Անտոն Բերնեի նկարիչը ընդհանուր գծերով մի
նկար հանեց, որը վերաբերում է Ֆրիդրիխ III-ի վեր-
ջին րօպէին: Թէ ինչ դրութեան մէջ է գտնված
մարմինը, այսօր արձանագրութիւն կազմվեց: Կայ-
սրի կտակը պահվում է պալատական մինիստրու-
թեան մէջ և կը բացվի արգարադատութեան

ուղղված և լուսանցքի վրա գրած Եւանգելեանի
այդ մասնաւոր խնդիրն էլ է շարում ու մոց-
նում Եւանգելեանի յօդուածի մէջ...

Եթէ «Արձագանքի» խմբագրական գործը այդ-
պէս շարունակվին, շուտով գուցէ կը հանդիպեք
այդ շաբաթաթերթում աւելի էլ ծիծաղելի բանե-
րի: Ինչ լաւ կը լինէր եթէ Մարտիրոսեանի տը-
պարանը շարէր, օրինակ, Եւանգելեանի յօդուա-
ծի լուսանցքի վրա գրած հետեւալ մասնաւոր
նկատողութիւնը «Արձագանքի» խմբագրին ուղղ-
ված:

«Սիրելի Արքայ, խնդրեմ անպատճառ տպել
տաս իմ այդ յօդուածը Արքային պաշտօնաւե-
լու համար, ևս ու դու, ի հարկէ, գիտե՛ք թէ ինչ
պտուղ է Արքային և թէ նա շատ անպաշտան է
վարվել եկեղեցական փողերի հաշտութեան
վերաբերմամբ, բայց ի՛նչ արած. պէտք է ՅՕ ՊՕ
ԵՄ ԵՄ ՍՏԱՆՈ պաշտպանել նրան, քանի որ
նա մեր ПАРТИЯ-ին է պատկանում և մենք այդ
ПАРТИЯ-ի հետ ТЪСНО СВЯЗАНИ մեր չանհրով: Ի՛նչ
արած. «ЛЮБИШЬ КАТАТЬСЯ, ЛЮБИ САНОВНИ ВО-
ЗИТЬ»:

Այն ինչ լաւ կը լինէր, որ Մարտիրոսեանի
տպարանը սխալվէր ու այս տեսակ նկատողու-
թիւնն էլ չարկւ. տար ու մոցնէր Եւանգելեանի
յօդուածի մէջ...

Հաւատացած եմ, որ Արքայը Յովհաննիսեան
և Գեորգ Եւանգելեան, որոնք վերջին ժամանակ-
ները բազմ շատ հարցերում լաւ խրվել են, մի
օր այս ձևով էլ կը խրվին խմբագրութեան սըր-
բագրողի անհոգութեան չնորժով:

ԱՍԻՍԻ

միմիստրի ներկայութեամբ Աստուծոյ որ կայսրը
կը թաղէր Պատարագի Friedens-Kirche-ի մէջ:
Վիլհելմ II կայսրի հռչակելը շատ հաւանական է
որ կը լինի միայն հանգուցեալ կայսրի թաղումից
ետոյ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 4 յունիսի: «Гражданинъ» լրագրի հատով ծախելը նորից թիւլ է տրված: Բոլոր լրագրիները շատ համակրական ներկայութեան են նուիրում Ֆրիդրիխ կայսրին: «Правит. Вѣст.» լրագիրը հաւաստեցնելով, որ բոլոր ժողովուրդները բաժանում են գերմանական ժողովուրդի տնայնի վիշտը, ասում է. «հանգուցեալ միապետի անկեղծութիւնը, ուղղամտութիւնը և մարդասիրութիւնը էր պատճառը, որ սիրում էին նրան ոչ միայն իր պրուսական և գերմանական հպատակները, այլ և համակրում էին նրան խաղաղութեան բոլոր բարեկամները: Գերմանիայի համար այժման ծանր րօպէում, հանգուցեալ կայսրի վերոյիշեալ յատկութիւնների յիշատակը կը միացնէ բոլոր ազգերը, որպիսի յարաբերութիւնների մէջ էլ գտնվեն Գերմանիայի հետ արտաքին քաղաքականութեան տեսակէտից, և այդ բոլոր ազգերը ի սրտէն կը ցաւակցեն գերմանական ազգի վշտին և կը յարգեն Ֆրիդրիխ կայսրի յիշատակը:»
«Русскій Инвалидъ» լրագիրը յայտնում է, որ Ֆրիդրիխ կայսրի մահան լուրը մեր զօրքի շարքերում ընդունվեցաւ անկեղծ ցաւակցութեան և խորին վշտի զգացմունքներով: «Journal de St. Petersburg» լրագիրը ասում է, որ Ռուսաստանը բաժանում է Հոհենցոլերնեան տան և գերմանական ժողովուրդի վիշտը և ցանկութիւն է յայտնում, որ Նախախնամութիւնը, որը վերջին ժամանակները այդքան ծանր փորձանքների ենթարկեց այդ տունը, այսուհետև աջողութիւն չնորհէ դրան և թող հարան կայսրութիւնը վայելէ բարօրութիւն և խաղաղութիւն պրուսական և գերմանական դաժն բարձրացած երիտասարդ կայսրի գայիստի տակ:

ԲԵՐԼԻՆ, 4 յունիսի: Հանգուցեալ կայսրի վերջին կամքի համաձայն, թաղումը կը կատարվի երկուշաբթի օր ընտանեկան նեղ շրջանում և առաւելագոյն գիտութեամբ ընտարովի կունենայ:

ՊԵՏ, 4 յունիսի: Տիսա պատգամաւորների ժողովում յայտնեց, որ փարիզի ցուցահանդիսին ունեցողների մասնակցութեան վերաբերմամբ արտասանած իր ճառի մէջ ինքն զիտաւորութիւն չունէր վերաբերել Ֆրանսիային, որի հետ Ունեցողներն ցանկանում է խաղաղութեամբ և բարեկամութեամբ ապրել:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 4 յունիսի: Այսօր Բերլին ուղևորվեց Մեծ Խլան Վլադիմիր Ալեքսանդրովիչ: Ֆրիդրիխ կայսրի թաղման օրը Բերլինի և Պետերբուրգի բօրանները փակված կը լինեն:

ԲԵՐԼԻՆ, 4 յունիսի: «Armee-Verordnungsblatt» լրագրում հրատարակված է Վիլհելմ II կայսրի տուած հրամանը զօրքին, որի մէջ յիշելով զօրքի անյողողող հպատակութիւնը իր առաջնորդ թագաւորին և յայտարարելով, որ կը հետեւի իր արժանաւորաւ պատկի և թանգալին հօր օրինակին՝ ասում է. «Այդպիսով մենք զօրքի հետ պատկանում ենք միմեանց, միմեանց համար ենք ծնվել, մենք անխնայ կը լինենք, թէ խաղաղութեան և թէ փոթորկի ժամանակ»: Չինտաւորական նաւատորմին ուղղված հրամանի մէջ կայսրը յայտնում է. «Հաւատարմին յայտնի է, որ ինձ ոչ միայն չափազանց ուրախացում է արտաքին ձևով իմ պատկանելութիւնը նաւատորմին, այլ և այն հանգամանքը, որ իմ վաղ պատանեկութեան ժամանակից ինձ, որպէս և իմ եղբորը, պրինց Էդուարդին, միացնում է նաւատորմի հետ մի բոցալաւա զգացմունքը»:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 յունիսի: Թագաւոր կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ գերմանական կայսրի մահան պատգամով Բարձրագոյն Պալատի մէջ սուգ պահել 4 շաբաթվա ընթացքում:

ԲԵՐԼԻՆ, 5 յունիսի: Ֆրիդրիխ կայսրի մարմինը անդամահատելու ժամանակ յայտնվեցաւ, որ հանգուցեալը իրաւ հիւանդ էր քաղցկեղով:

ՎԻԷՆԱ, 5 յունիսի: Կ. Պոլսից ստացած տեղեկութիւններին նայելով, անցեալ երկուշաբթի օր, բայրամի տօնի ժամանակ, սուլթանի ուղևորվելու միջոցին զէպի մզկիթը, արաբական գնդի մի գլխաւոր անարգեց ալբանական գնդի մի գլխաւորին: Հետեւալ օրը ամբողջ ալբանական գոտիը իշխող-կիսակի մօտ գտնվող զօրա-

նոցից զօրա զաւով յարձակումն դրծեց արաբական գնդի զօրանոցի վրա և սկսեց հրացաններ արձակել: Արաբական գոտիը նոյնպէս պատասխանեց հրացանաձգութեամբ. սպանված են 6 և վիրաւորված են 30 հոգի: Ուրիշ գնդերը համակրով դադարեցրին հրացանաձգութիւնը: Երկու գնդերի զօրանոցները պաշարված են զօրքերով և ալբանական զինուորները զինաթափ են արած ու պատժված են: Նրանց պիտաւորը, խմայիլ-փաշան նստացրած է շոգենաւի վրա և այսօր է ուղարկված: Իսկ իշխող-կիսակի կոմէնդանտ, Ֆեցան-Խալալկի-փաշան պաշտօնից արձակված է:

ԲԵՐԼԻՆ, 6 յունիսի: Մեծ-Խլան Վլադիմիր Ալեքսանդրովիչ հասաւ այսօր 9 ժամին Երեկոյան: Լրագիրները հաղորդում են, որ բժշկագետ Մէկէնդի, Վիլհելմ II կայսրի հրամանով հաշիւ ներկայացրեց Ֆրիդրիխ կայսրի հիւանդութեան ընթացքի մասին: Այդ հաշիւ մէջ ասված է, թէ այժմ հաստատապէս յայտնվում է, որ Ֆրիդրիխ կայսրի կոկորդի հիւանդութիւնը քաղցկեղն է: Միայն կայսրի կենդանութեան ժամանակ զգուշ էր որոշել հիւանդութիւնը, որովհետև նա կոկորդի ստորին մասում էր կենտրոնացած:

ՓԱՐԻԶ, 6 յունիսի: Այսօր Շարանտի դէպարտամենտում կատարվող պատգամաւորի ընտրութիւնների ժամանակ ժէլէբէ բօնապարտեանը ստացաւ 31,040 ձայն, հանրապետական Վէյլլէ—23,989 ձայն և բուլանտեան կանդիդատ Դեբուլէ—20,656 ձայն: Կրկնաքուէարկութիւն պիտի լինի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՕՐԱՍ	
Յունիսի 3-ին	
Լօնդօնի վրա 10 ֆունտ արծէ.	114 > 8
Համբուրգի վրա 100 մարկ	55 > 90
Փարիզի վրա 100 ֆրանկ	44 > 95
Ոսկի	9 > 8
Մարսայի կուպոններ	182 > 50
Արծաթ	1 > 39
Բօրսայի գիւնդաներ	6 1/2% 7 1/4%
Պետակ. բան. 5% տուս 1-ին յրջանի	99 > 12
— — — — —	2-րդ — 98 > 25
— — — — —	3-րդ — 98 > 50
— — — — —	4-րդ — 98 > 50
— — — — —	5-րդ — 98 > 25
— — — — —	6-րդ — — > —
Նօր 4% փոխառութիւն.	82 > 50
Արեւելի 5% փոխառութ. 1-ին յրջ.	100 > —
— — — — —	2-րդ — 98 > 62
— — — — —	3-րդ — 98 > 62
Ներքին 5% առաջին փոխառութ.	273 > 75
— — — — —	երկրորդ — 243 > 75
5 1/2% ընտա	100 > 50
Ոսկեայ ընտա	194 > 50
Եօթերորդ կօնսօլդացած փոխառութիւն.	167 > 50
Նօր երկաթուղային ընտա	99 > —
5% գրաւական թղթեր կալուած.	— > —
— — — — —	169 > —
— — — — —	97 > 37
5 1/2% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	99 > 25
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 > —
— — — — —	101 > —
— — — — —	101 > —
— — — — —	100 > 50
— — — — —	101 > 75
— — — — —	100 > 50
— — — — —	101 > —
— — — — —	101 > —
— — — — —	27 և 43 տ. — > —
— — — — —	18 և 43 տ. — > —
Վօլգո-Կասկի բանկի ակցիաները	693 > —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	267 > —
Բիբլիս-Վօլգոյի ընկ.	84 > 25
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ-գաջիաներ.	94 > 50
— — — — —	93 > 12
Մօսկվայի քաղաք. օրվգաջիաներ	94 > 25
Օղէնայի — — — — —	— > —
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ.	— > —
Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:	

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄՈՑ	
ՄԻՄՅԵՐՈՊՈԼ. Կ. Յ. Ե. Ստացանք ձեր յօդաւոր և 5 թուրքի, որպէս զի այդ փողով «Մշակի» աւելորդ համարներ տպելը, որտեղ գտնված կը լինի յօդաւոր: Բայց յօդաւոր չենք տրուում, ուստի ինչպիսիք ենք ուղարկել մեզ ձեր հասցէն, որպէս զի 5 թուրքին ձեզ յետ ուղարկենք:	
Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ	

Այսօր, յունիսի 7-ին, Կոստանաց Եկեղեցում 10 ժամին կատարվելու է Ներգործական Պետական Խորհրդական ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵԱՆԻ մահուան քառասորեայ հորեհանգստեան պաշտաման կարգը:
Ս. Պատարագը կը սկսվի 10 ժամին:
1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ յունիս ամիս 15-ին, երեկոյան 8 ժամին, լինելու է երկրորդ անգամ աճուրդ (առանց կրկնաձրդի) կապով տալու 21 կրպակներ, որոնք գտնվում են Վարդգեսապետական հրապարակի վրա Վանքի-մայր եկեղեցու մօտ: Պայմանաթուղթը կարելի է կարգող Հոգաբարձութեան գիւմրաստանի մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամ:
1—3

Որովհետև այս տարի աշանը և ձմեռը պիտի հրատարակվեն «ԵՐԱՆԱՅՐԻՔԻ» երրորդ և Հորբորդ գրքերը, ուստի յայտնում եմ այն յարգելի անձանց, որոնք բաժանորդ են գրվել «ԵՐԱՆԱՅՐԻՔԻ» համար, յայտնեն իրանց նոր հասցէն, եթէ մի գիւղից կամ քաղաքից տեղափոխվել են իմ հասցէն. *Սուղաթը, (через Бѣлый-Ключъ) Армаку Метрабасъ.*
Արշակ Մեհրաբեան

Մամուլի տակից լոյս տեսաւ
«ՄՏԱՄՈՂՈՐ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԿԱՄ ԹՇՈՒԱՌ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ»
Վերնագրով գրքը, որ բաղկացած է 120 երեսից:
Գինն է 25 կօպէկ:
Վաճառվում է Կենտրոնական և «Աղբիւր» գրավաճառանոցներում:
Վաճառվում է Կենտրոնական և «Աղբիւր» գրավաճառանոցներում:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԵՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՍԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանտնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադրած.
Հինգշաբթի, յունիսի 9-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) զօրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պետք է գիտնել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմօդլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արժուէրի գալիերէում, № 103.
4—4

ԴԷՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԵՔԵԼԻ
Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ
Միջին-Փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ) երեւանեան հրապարակից), Նարմանովի տանը ԲԱՅՎԱԾ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՇԵՍ ԿԵՐՈՍԻՆՆԵՐ ԲԱՅՎԱԾ ՄԱՍ ՄԱՍ ԾԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերօսինից: Նա հոտ չունի և կատարելապէս անվնաս է:
ԳՆԵՐԸ ՁԱՓԱՌՈՐԿՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՏ ԲԱԳՈՒԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ:
Մշակների կողմից խաբեայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ գալիս է կերօսին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ «E. A. ЦАТУРОВЪ. Керосинъ» գրութեամբ:
Առաջին պահանջը. ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՑ, Պալլոսկու բժշկարանի կողմից: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ առանձին գրքով և վճարել ամեն ամիս:
18—25 (Շ. Ե.)

ԵՐԵՒԱՆԻ ԳՈՂԱԲԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի տեղեկութիւն համայնից, որ քաղաքային Խորհրդարանը 29-ն սեպտեմբերի 1887 և 15 մարտի 1888 թականների կայացրած փոփոխութեան կարգադրել է:
1) Խորհրդարանի առաջին կայ 1888—1892 քառամեակի ձայնաւորներ ընտրելու մասին կազմել քաղաքային ընտրողական ժողովներ, առաջին կարգի համար 20-ին, երկրորդ կարգի 24-ին և երրորդ կարգի 28-ին հօտեմբերի 1888 ամի:
2) Զբ պահանջել կառուածատէրերից նրանց կառուածների վրա 1864 թւից ըսկած մինչև 1879 ամի մնացած քաղաքին հասանելի ապառիկները:
3) Զբ պահանջել կառուածատէրերից այն տուգանքը որ նրանք պէտք է վճարէին քաղաքի օգտին կառուածներից հասանելի 10% տուրքը իր ժամանակին չը վճարելու համար մինչև 29-ն սեպտեմբերի 1887 ամի, բացի այս չը պահանջել այս տեսակ տուգանքը 29-ից սեպտեմբերի 1887 ամի մինչև Խորհրդարանի նոր կազմակերպելին:
4) Ընտրողական ցուցակների աւարտել մինչև օգոստոսի 20-ն 1888 ամի:
5) Վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակներն յայտնել ի տեղեկութիւն համայնից օգոստոսի քսանին 1888 ամի բաժանելով քաղաքայիններին, նմանապէս կայանելով քաղաքի յայտնի տեղերում և Խորհրդարանի դահլիճում 200 օրինակ տպված յայտարարութիւններ:
6) Քաղաքի բնակչաց զանգամանակ ընտրողական ցուցակների մէջ թող տուած սխալանաց մասին ընդունել քաղաքային վարչութիւնում օգոստոսի քսանից մինչև երեքըն սեպտեմբերի և այնուհետ համաձայն 27-որդ յօդ. քաղաքային կանոնադրութեան ուղղված ընտրողական ցուցակներն ներկայացնել Խորհրդարանի հաստատութեան անշուշտ մինչև ց16-ն սեպտեմբերի 1888 ամի:
Ընդ ամին քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում զգուշացնել քաղաքի բնակիչներին թէ թէպէտ տնի յայտարարութեան 4-րդ հատուածում յիշած ընտրողական ցուցակների աւարտել Խորհրդարանը նշանակել է 20-ին օգոստոսի 1888 ամի և այդ ընտրողական ցուցակների մէջ համաձայն 4-րդ հատուածի 17 յօդուածով քաղաքային կանոնադրութեան, անկարելի է մոցնել քաղաքի այն բնակիչներին որոնց վրա մինչև յիշեալ ժամանակը մնացած կը լինեն ապառիկներ քաղաքին հասանելի տուրքերից, բայց համաձայն հրամանի պետական սէնատի 5 փետրվարի 1885 ամի № 1312, որով բացատրված է քաղաքային կանոնադրութեան 17-րդ յօդուածի իսկական միտքը, յիշեալ բնակիչներն պէտք է մոցնվեն ընտրողական ցուցակների մէջ 20 օգոստոսի 1888 ամի ժամանակից յետոյ էլ, միայն այն պայմանով եթէ նրանք կը վճարեն իրանց վրա մնացած ապառիկներն մինչև այն ժամանակ, երբ քաղաքային Խորհրդարանը վերջապէս կը հաստատէ ընտրողական ցուցակներն:
3—3

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Երկու ուսուցիչներ պատրաստում են աշակերտներին Գիմնազիայի և Ներսիսեան դպրանոցի առաջին և երկրորդ դասարանների համար:
Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը:
1—3